## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
## «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09.04. 2020թ.
ժամը $10^{00}$
Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝**
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

**Գնահատողներ՝**
- ՀՀ ԶՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության պետ, գնդապետ Ս. Մազմանյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռուստյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության ավագ սպա, մայոր Հ. Մանուկյան,

**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա. Հովհաննիսյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«հրշեջ գույք, նյութական միջոցներ»**ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1. | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 2. | «Էլկոմպ» ՍՊԸ |
| 3. | «ՏՆՄ» ՍՊԸ |
| 4. | «ՖԻՆ ԼԱԲ» ՍՊԸ |
| 5. | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 6. | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| 7. | «Պոժմաստեր» ՍՊԸ |
| 8. | «Վարբադ» ՍՊԸ |
| 9. | «ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ |
| 10. | «Նաիրի Թորոսյան» ԱՁ |
| 11. | «Ալեռտո» ՍՊԸ |
| 12. | «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ |
| 13. | «Պոժտեխնիկա» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ

-**«Պոժմաստեր» ՍՊԸ**-ի, որի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված ПО-6ЦТ կամ համարժեք (6%) տեղեկատվությունը անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը:

-**«ԳԴԱԿ» ՍՊԸ**-ի, որի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված.

1) 6-րդ և 7-րդ չափաբաժիններով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրերում նշված է Փողրակի տրամագիծ՝ 50+2 մմ, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված 6-րդ և 7-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերին՝ որոնցով սահմանված են այլ չափեր՝ Փողրակի տրամագիծը կազմում է 51+/-2 մմ:

2) 8-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է Փաթեթավորումը՝ մինչև 20 կգ-ոց մետաղյա տարաներով, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված 8-րդ չափաբաժնով նշված ապրանքի տեխնիկական բնութագրին՝ որով սահմանված է Փաթեթավորումը՝ մինչև 5 կգ-ոց մետաղյա տարաներով:

3) 9-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է Փաթեթավորումը՝ մինչև 20 կգ-ոց մետաղյա տարաներով, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված 9-րդ չափաբաժնով նշված ապրանքի տեխնիկական բնութագրին՝ որով սահմանված է Փաթեթավորումը՝ մինչև 1 կգ-ոց մետաղյա տարաներով:

4) 10-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված՝ Հակաիրդեհային ուպարկ <Երմակ> կամ համարժեք տեղեկատվությունը անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը:

- **«ՏՆՄ» ՍՊԸ-ի**, որի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 10-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում թերի և ոչ լիարժեք են լրացված սույն ընթացակարգի հրավերով սահմանված 10-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերը, որը չի արտահայտում տվյալ ապրանքի նկարագիրն ամբողջությամբ:

**«Էլկոմպ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված 1.1-ով ներկայացված Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է ավելորդ՝ սույն ընթացակարգի հրավերով չպահանջվող տվյալներ՝ արտադրողի անվանում, որը հանձնաժողովը որոշեց չքննարկել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» **կարգի 41-րդ կետը՝ 17.04.2020թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4. **23.04.2020թ.**-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ սույն արձանագրության 2.3 կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են, **ինչպես նաև հաշվի առնելով սույն ընթացակարգի գնման հայտը նախագծող անձի կողմից 17.04.2020թ. N 54/1152 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը** որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| Չ/հ | Գնման առարկա | Չ/մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | Գնային առաջարկ ՀՀ դրամ | | | | | Ընտրված մասնակցի անվանումը /բանակցություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/հ | Անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր գին | |
| 1 | հրդեհի մարման փրփուր կամ համանման միացություններ/փրփրահեղուկ/ | լիտր | 2,000 | 1,474,000 | 1 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 900,000 | 180,000 | 1,080,000 | 216,000 | 1,296,000 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 1,164,800 | 115,200 | 1,280,000 | | 1,280,000 | |
| | | | | | 3 | «Էլկոմպ» ՍՊԸ | 1,800,000 | 200,000 | 2,000,000 | 400,000 | 2,400,000 | |
| 2 | կրակմարիչներ/կրակմարիչ կփ-2/ | հատ | 2,000 | 5,400,000 | 1 | «Ալեռտո» ՍՊԸ | 3,750,000 | 400,000 | 4,150,000 | 830,000 | 4,980,000 | «Ալեռտո» ՍՊԸ |
| | | | | | 2 | «ՕՐՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ | 4,050,000 | 450,000 | 4,500,000 | 900,000 | 5,400,000 | |
| | | | | | 3 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 4,258,800 | 421,200 | 4,680,000 | | 4,680,000 | |
| | | | | | 4 | «Պոժտեխնիկա» ՍՊԸ | 4,500,000 | 500,000 | 5,000,000 | 1,000,000 | 6,000,000 | |
| 3 | կրակմարիչներ/կրակմարիչ ակ-2/ | հատ | 500 | 3,490,000 | 1 | «Ալեռտո» ՍՊԸ | 2,500,000 | 200,000 | 2,700,000 | 540,000 | 3,240,000 | «Ալեռտո» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Պոժտեխնիկա» ՍՊԸ | 2,981,250 | 331,250 | 3,312,500 | 662,500 | 3,975,000 | |
| | | | | | 3 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 3,367,000 | 333,000 | 3,700,000 | | 3,700,000 | |
| 4 | փրկարարական կոստյում ներ/փրկարարական կոստյում (ջերմաանդրադարձիչ կոստյում ջակ-200), (ток-200) | հատ | 15 | 2,850,000 | 1 | «Էլկոմպ» ՍՊԸ | 1,900,000 | 185,000 | 2,085,000 | 417,000 | 2,502,000 | «Էլկոմպ» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 1,900,000 | 200,000 | 2,100,000 | 420,000 | 2,520,000 | |
| | | | | | 3 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 2,055,702 | 280,323 | 2,336,025 | 467,205 | 2,803,230 | |
| | | | | | 4 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 2,156,700 | 213,300 | 2,370,000 | | 2,370,000 | |
| 5 | հակահրդեհային վերմակներ | հատ | 116 | 363,080 | 1 | «Ալեռտո» ՍՊԸ | 157,500 | 50,000 | 207,500 | 41,500 | 249,000 | «Ալեռտո» ՍՊԸ |
| | | | | | 2 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 218,452 | 29,788 | 248,240 | 49,648 | 297,888 | |
| | | | | | 3 | «ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ | 265,500 | 36,000 | 301,500 | 60,300 | 361,800 | |
| | | | | | 4 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 337,792 | 33,408 | 371,200 | | 371,200 | |
| | | | | | 5 | «Էլկոմպ» ՍՊԸ | 400,000 | 52,400 | 452,400 | 90,480 | 542,880 | |
| 6 | ռետինափողակներ (հրշեջ ծորակների համար) | մետր | 500 | 292,500 | 1 | «Ալեռտո» ՍՊԸ | 150,000 | 50,000 | 200,000 | 40,000 | 240,000 | «Ալեռտո» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 191,100 | 18,900 | 210,000 | | 210,000 | |
| | | | | | 3 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 209,000 | 28,500 | 237,500 | 47,500 | 285,000 | |
| | | | | | 4 | «Էլկոմպ» ՍՊԸ | 350,000 | 56,250 | 406,250 | 81,250 | 487,500 | |
| 7 | ռետինափողակներ (հրշեջ մեքենաների համար) | մետր | 1,000 | 1,260,000 | 1 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 564,200 | 55,800 | 620,000 | | 620,000 | «Պոժմաստեր» ՍՊԸ |
| | | | | | 2 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 783,200 | 106,800 | 890,000 | 178,000 | 1,068,000 | |
| | | | | | 3 | «Էլկոմպ» ՍՊԸ | 800,000 | 115,000 | 915,000 | 183,000 | 1,098,000 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 4 | «Ալեռտո» ՍՊԸ | 800,000 | 200,000 | 1,000,000 | 200,000 | 1,200,000 | |
| 8 | Ներկ-էմալ, գույնը՝ կարմիր/կարմիր էմալ ներկ պֆ-115/ | կգ | 2,000 | 1,600,000 | 1 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 968,000 | 132,000 | 1,100,000 | 220,000 | 1,320,000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Նաիրի Թորոսյան» ԱՁ | 1,203,676 | 127,824 | 1,331,500 | 266,300 | 1,597,800 | |
| 9 | Ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ/սպիտակ էմալ ներկ պֆ-115/ | կգ | 200 | 164,000 | 1 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 113,520 | 15,480 | 129,000 | 25,800 | 154,800 | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Նաիրի Թորոսյան» ԱՁ | 123,170 | 13,080 | 136,250 | 27,250 | 163,500 | |
| 10 | հակահրդեհային սարքեր/հակահրդեհային ուսապարկ հու-18/ | հատ | 110 | 7,315,000 | 1 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 4,600,000 | 347,250 | 4,947,250 | 989,450 | 5,936,700 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Էլկոմպ» ՍՊԸ | 4,900,000 | 270,000 | 5,170,000 | 1,034,000 | 6,204,000 | |
| | | | | | 3 | «ՏՆՄ» ՍՊԸ | 4,752,000 | 528,000 | 5,280,000 | 1,056,000 | 6,336,000 | |
| | | | | | 4 | «ՖԻՆ ԼԱԲ» ՍՊԸ | 4,500,000 | 900,000 | 5,400,000 | 1,080,000 | 6,480,000 | |
| | | | | | 5 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 4,500,000 | 1,200,000 | 5,700,000 | 1,140,000 | 6,840,000 | |
| | | | | | 6 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 5,142,984 | 701,316 | 5,844,300 | 1,168,860 | 7,013,160 | |
| | | | | | 7 | «Պոժմաստեր» ՍՊԸ | 5,405,400 | 534,600 | 5,940,000 | | 5,940,000 | |
| | | | | | 8 | «Վարբադ» ՍՊԸ | 5,440,000 | 500,000 | 5,940,000 | 1,188,000 | 7,128,000 | |
| | | | | | 9 | «ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ | 5,302,500 | 720,000 | 6,022,500 | 1,204,500 | 7,227,000 | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են հրավերի պայմաններին (ճիշտ են):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

4.1 28.04.2020թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով սույն ընթացակարգի գնման հայտը նախագծող անձի կողմից 27.04.2020թ. N 54/1240 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը, որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ին՝ թիվ 1 և 10 չափաբաժինների մասով,

2) «Ալեոտո» ՍՊԸ-ին՝ 2,3,5,6 չափաբաժինների մասով,

3) «Էլկոմպ» ՍՊԸ-ին՝ 4 չափաբաժնի մասով,

4) «Պոժմաստեր» ՍՊԸ 7 չափաբաժնի մասով,

5) «ԳԴԱԿ» ՍՊԸ-ին՝ 8 և 9 չափաբաժինների մասով:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Ա. Հովհաննիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/25» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Ս. Մազմանյան

**Գնահատող** Գ. Ռուստյան

**Գնահատող** Հ. Մանուկյան

**Գնումները համակարգող՝** Ա. Հովհաննիսյան